ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ ՀՀ ԿԳՄՄՆ << ՄԱՐՏՈՒՆՈՒ Տ.ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԱՎԱԳ ԴՊՐՈՑ>> ՊՈԱԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ

ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա՝ Տեղեկատվական տեխնոլոգիաների ազդեցությունը ուսումնառության վրա
Անցկացման վայր՝Վարդենիս
Աշխատանքի ղեկավար՝ Հասմիկ Բեյբության
Ուսուցիչ՝ Հերմինե Մելքոնյան
Դպրոց՝ Սոթքի միջնակարգ դպրոց

Վարդենիս 2022

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն……1

Գրական ակնարկ……2-9

Փորձարարական հետազոտություն,Փորձարարկան դաս 1…...10

Փորձարարական դաս 2……11

Փորձարարական դաս 3……12

Եզրակացություն……13
Օգտագործված գրականության ցանկ……...14

Հավելված……15-22

Ներածություն

<<Կրթությունն ազատության ոսկե դուռը բացելու բանալին է >> : Ձ. Վաշինգտոն.

Այս խոսքերը պատահական չեն ընտրված որպես հետազոտական աշխատանքի նախաբան, չէ՞ որ կրթությունն է ձևավորում մեր վարքը, ազդում մեր որոշումների կայացման վրա՝ վերջինս էլ մեր կյանքի որակի, հաջողությունների և ձեռքբերումների վրա:

Խոսելով տեղեկատվական տեխնոլոգիաների կամ ՏՏ ոլորտի մասին ՝ պետք է նշել, որ հատկապես վերջին տասնամյակում այն ավելի խորը արմատներ ձգեց տնտեսության և գիտակրթական համակարգի բնագավառում: Հատկանշական է, որ այսօր դժվար է պատկերացնել կրթությունն առանց տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառման: Տեղեկատվական նորագույն տեխնոլոգիաները , համակարգիչը արդեն իսկ դարձել են մեր կրթական համակարգի անքակտելի մասնիկը:

Հետազոտական այս աշխատանքում ես կփորձեմ վեր հանել կրթության և ՏՏ-ի միջև ամուր կապը, ՏՏ-ի միջոցով կրթությունն ավելի հասանելի դարձնելը և կներկայացնեմ դրանց դրական և բացասական ազդեցությունը:

Գրական ակնարկ

Կրթական համակարգն անընդհատ բարեփոխումների կարիք է զգում: Գիտության ու մշակույթի արագ զարգացումն իր հերթին նոր պահանջներ է առաջադրում ոչ միայն արդյունաբերության և տնտեսության, այլև կրթական համակարգին: Վերջին տասնամյակում դրա լայնորեն կիրառումը նպաստել է գիտակրթական համակարգերի, արտադրողականության բարձրացմանը , ինչպես նաև այն ճանաչվել է գիտելիքահենք տնտեսության զարգացման հիմնաքար: Սակայն հետխորհրդային երկրները, այդ թվում և Հայաստանը ունեն առանձնահատուկ խնդիրներ. բարձր կրթական մակարդակ ունեցող հասարակությունները ստիպված էին բարեփոխումներ կատարելու կրթական համակարգում , ինչը հանգեցրեց նոր և դժվարին խնդիրների առաջացմանը՝ հին արժեքներ և նոր հրամայականներ:[1]

Ցավոք, մեր կրթական համակարգը կառուցված է այնպես, որ մենք ավելի շատ մակերեսային բաներ ենք սովորում: Մեր կրթական համակարգը վազք է կրթական ծրագրի հետևից, ինչի պատճառով աշակերտները չեն հասցնում խորքային գիտելիքներ ձեռք բերել: Եվ այդ է պատճառը, որ վերջին տարիներին շատ մարդիկ փորձում են գիտելիքն ու մտածողությունը հակադրել իրար: Հաճախ ենք լսում արտահայտություններ, որ Google-ն ամեն ինչ գիտի: Հետևաբար՝ մեր խնդիրը գիտելիք ունենալը չէ, այլ մտածողության հմտությունները զարգացնելը:

Բայց այդպես չէ: Այսօր էլ հիմնային գիտելիքը ուսուցման հիմքն է: Ոչ մի բժիշկ չի կարող բարդ վիրահատություններ անել առանց հիմնային գիտելիքի: Ոչ մի պատմաբան չի կարող վերլուծություններ անել առանց անուններ և թվականներ հիշելու: Նման տեսակետ արտահայտողները գիտելիքը շփոթում են տեղեկույթի հետ: Google-ն ունի տեղեկույթ: Իսկ

[1] https://hetq.am/hy/article/8705

Տեղեկատվական տեխնոլոգիաներ. օգուտ, թե՞ վնաս:ՏՏ-ի դրական և բացասական ազդեցությունը

21-րդ դարը տեղեկատվական տեխնոլոգիաների կտրուկ զարգացման և դրանից կախվածության դար է: Մարդն այնքան է "կապվել" իր հեռախոսին, որ իր կյանքի և ոչ մի որոպե չի բաժանվում նրանից: Բնականոն զարգացման երևույթ է, երբ տեղեկատվական տեխնոլոգիաներն իրենց տեղը զիջում են նորերին՝ նոր սերնդի ՏՏ-երին:

Ինտերնետային տեխնոլոգիաների ամենատարածված միջոցի զարգացմանը զուգընթաց վերջինտարիներին սկսել է կիրառվել "ինտերնետային կախվածություն" եզրույթը: Բազմաթիվ են հետազոտությունները, գիտական հրապարակումները և գիտաժողովները, ոտեղ խոսվում է ինտերնետային կախվածության ՝ որպես ժամանակակից խանգարման մասին: Որքան արագ են զարգանում ժամանակակից տեխնոլոգիաները, այնքան մեծ է դրանց կիրառման հետևանքով առաջացած բացասական դրսևորումների հավանականությունը[5]:

Հետազոտական աշխատանքի վերջին գլխում կխոսենք տեղեկատվական տեխնլոգիաների դրական և բացասական ազդեցության մասին և գուցե կկարողանանք պատասխանել այն հարցին,արդյոք այն օգուտ է, թե վնաս: Տեղեկատվական տեխնոլոգիաներն իրենց զարգացման առավելություններով հանդերձ ունեն նաև բացասական կողմեր:

1.ՏՏ-ն այսօր համարվում է թիվ 1 տեղեկատուն, այսինքն այն ապահովում է տեղեկատվության մատչելիություն- սա թերևս դրական կողմն է: Բայց այն ունի նաև իր բացասական կողմը-ինֆորմացիան այսօր այնքան հասանելի է, որ մարդը շատ քիչ ջանք

[5] Լուսինե Կարապետյան, "Ինտերնետային կախվածության հիմնախնդիրների շուրջ",էջ 30.

ու խելք է օգտագործում այն գտնելու համար: Օրինակ՝ կա լուծում պահանջող խնդիր, որի պատասխանն իմանալու համար այսօր չենք փորձում այն ինքնուրույն լուծել,այլ պարզապես դրա պատասխանը փնտրում ենք ինտերնետում: Բացի այդ որքան էլ վերջինս պարունակում է կարևոր ինֆորմացիա, այն միևնույն ժամանակ տալիս է ստահոդ, կեղծ կամ իրականությանը չհամապատասխանող ինֆորմացիա, որին իր հերթին կարող է առաջացնել լարվածություն և ագրեսիա:

2. SS-ի բացասական ազդեցություններից է իհարկե առողջությանը հասցվող վնասը: Շատերը կհակադրվեն այս կարծիքին, հեևաբար հիմնավորենք մեր փաստարկը.SS-ն առաջին հերթին ազդում է մեր տեսողության վրա՝ նրանից երկար ժամանակ օգտվելու դեպքում, երկրորդ ՝ այն ազդում է մարդու ամբողջ օրգանիզմի վրա իր արտանետած էլէկտրամագնիսական ճառագայթների պատճառով, ինչն իր հերթին կարող է բերել նյարդային, իմունային և արտանոթային համակարգի խանգարումներ:

3. SS-ն խնայում է մեր ժամանակը, ասինքն նրա շնորհիվ մեզ անհրաժեշտ ինֆորմացիան ավելի արագ ենք գտնում կամ թեկուզ մարդկանց հետ ավելի արագ կապ հաստատում: Ճիշտ է ՝ ոմանք այն օգտագործում են խելամտորեն, ոմանք էլ այն պարզապես դարձրել են միջոց ՝ կյանքի թանկարժեք րոպեները սպանելով բջջային հեռախոսներում կամ ինտերնետում:

4. SS-ի անսահմանափակ օգտագործումն իր հերթին հանգեցնում է կախվածության: Ահա 21-րդ դարի հիվանդությունը.մենք կարող ենք չսնվել, չքնել կամ պարզապես չհանգստանալ, բայց կարող ենք ամբողջ օրն անցկացնել համակարգչի դիմաց, որն էլ առաջ է բերում անքնություն, խրոնիկ մի շարք հիվանդություններ: Եվ սրա համար չենք կարող առանձնացնել որևէ տարիային՝ այսօր բոլորս էլ կախվածություն ունենք համացանցից:

Ինտերնետ կախվածություն, ինտերնետի չարաշահում, ինտերնետի հիվանդագին կիրառում. սրանք եզրույթներ են,որոնք բազմաթիվ հետազոտողների քննության առարկա են դարձել:

Օրինակ Ք.Յունգը ինտերնետային կախվածությունը որպես հոգեկան առողջության խնդիր որակող տեսաբաններից է:Նա նշում է, որ ինտերնետային կախվածություն կարող է ունենալ յուրաքանչյուրը: Մեկ այլ տեսաբան Մ.Գրիֆիթսը նշում է,որ տեխնոլոգիական կախվածությունը սկզբում դրսևորվում է պասիվ, բայց հետո այն կարող է դառնալ հիվանդագին: Այս տեսակետներին հակադրվում է Վ.Գլասերը , ով իր "Դրական կախվածություն" աշխատությամբ փորձում է ապացուցել,որ ոչ բոլոր կախվածություններն են բացասական:[6] Ուշադիր զննենք տրամագիրը՝ կատարված հետազոտությունների արդունքում պարզ է դարձել, որ տեղեկատվական տեխնոլոգիաների "չափազանց շատ լինելը մեր կյանքում" բերում է հետևյալ խնդիրների առաջացմանը, ինչն էլ իր հերթին հանգեցնում է գիտակրթական մակարդակի նվազեցմանը:

Տրամագիր 1.



[7]

Այսպիսով, այս աշխարհում ամեն բան հարաբերական է: Տեղեկատվական տեխնոլոգիաները սրընթաց զարգանում են՝ հեշտացնելով մեր կյանքը, առօրյան, սակայն դրան զուգահեռ վնասում են մեզ: Մենք պետք է կարողանանք զատել կարևորն

[6] Լուսինե Կարապետյան, "Ինտերնետային կախվածության հիմնախնդիրների շուրջ, էջ 32
[7] http://www.noravank.am/arm/articles/detail.php?ELEMENT_ID=16122

անկարևորից, հասկանալ ու գիտակցել,որն է մեզ համար առաջնային՝ վատնել մեր ժամանակը համացանցում, ինտերնետային խաղեր խաղալով, թե՞ մեր առողջությունը, իրական կյանքը և պարզ մարդկային հարաբերությունները:

գիտելիքն այսօր էլ կարևոր է, քանի որ, ինչպես շատ դիպուկ նշում է ամերիկացի հոգեբան Դանիել Ուիլինգհամը, եթե չկա գիտելիք, ապա ինչի՞ մասին ենք մենք մտածում: Այլ հարց է, որ պարզապես գիտելիք ունենալը բավարար չէ: Բայց առանց գիտելիքի մտածելն էլ վտանգավոր է:[2]

Ամեն դեպքում, կրթության ոլորտում եւ հենց կրթություն հասկացության մեջ կատարվող ներկա փոխակերպումը ամենից ավելի հեշտ է նկարագրել կրթության միջավայրի կամ տեխնոլոգիական հիմքի փոփոխմամբ՝ որպես աստիճանական անցում տպագիր միջոցներից եւ դրանցով պայմանավորված մոդելից դեպի ժամանակակից ՏՀՏ-ի վրա հիմնվող կրթության համակարգեր: Արդի տեխնոլոգիաների նշանակության աճը եւ դրանց տիրապետելու անհրաժեշտությունը բերում են գրագիտության նոր, ավանդականից տարբեր հասկացություն, մեծ փոփոխության է ենթարկվում նաեւ սովորելու եւ սովորեցնելու բնույթը: Միեւնույն ժամանակ, կրթությունը դուրս է գալիս «դպրոց—համալսարան» ավանդական շրջանակից՝ տեղ բացելով հանրային կրթության զանազան ձեւերի համար:[3]

Հայաստանում ինտերնետի և համակարգչի տարածման սկզբնական շրջանում մադիկ այդ ոլորտի մասին որոշակի գիտելիքներ էին ձեռք բերում մասնավոր կրթական հաստատություններում: Իհարկե այժմ իրավիճակն այլ է ՝ տեղեկատվական տեխնոլոգիայի իմացությունն ու դրա նախնական տարրերը մտել են դպրոցական և համալսարանական ծրագրեր: Բայց անգամ այդ պայմաններում ամենաբարդը դպրոցում է իրականացվում նորագույն տեղեկատվական տեխնոլոգիաների ներդրումն ու կիրառումը: Ցավոք, այսօր Հայաստանում կան դպրոցներ, որոնք <<զինված>> չեն նորագույն տեխնիկայով, հարուստ չեն համակագչային դասարաններով: Իհարկե նման պայմաններում արդեն ավելորդ է դառնում խոսել որակական փոփոխությունների մասին: Հարց է առաջանում. «ո՞րն է համակարգչի (Ինտերնետի) դերը կրթության մեջ, եթե կա այդպիսի դեր կամ մի՞թե հայկական դպրոցի համար առաջնահերթ խնդիրն այսօր, հայերեն լեզվով էլեկտրոնային կրթական բովանդակության գրեթե իսպառ

[2] Սերոբ Խաչատրյան.” Ուսուցման արդյունավետ հնարներ”,2020, էջ 12
[3] https://hetq.am/hy/article/8705

բացակայության պայմաններում, ինտերնետային կապն է», ընդհանուր առմամբ հստակ պատասխան չկա:

Այս գլխում մի փոքր կխոսենք նաև, թե գործնականում ինչ է նշանակում տեղեկատվական տեխնոլոգիա և զարգացման ինչ փուլեր է անցել: Նախ համառոտ այն մասին, որ SS-ի տեխնոլոգիական խնդիրը առավել արդյունավետ արտադրական գործընթացներ իրականացնելն է: Ըստ տեխնոլոգիական կիրառման SS-ի տեսակներնեն.

1. ձեռքի SS-եր՝ հատիչ, գրիչ, թանաք,
2. մեխանիկական SS-եր՝ գրամեքենա , հեռախոս, դիկտաֆոն, հաշվամեքենա
3. էլեկտրական SS-եր՝ էլեկտրական գրամեքենաներ, հաշվասարքեր,
4. էլեկտրոնային SS-եր՝ համակարգիչներ, հեռահաղորդակցման միջոցներ:[4]

Լավ, իսկ ո՞րն է SS-ի նպատակը: Դրա նպատակն է տեղեկատվական պաշարներից ստեղծել օգտագործողի պահանջները բավարարող որակյալ տեղեկատվական արտադրանք: Մի փոքր խոսենք տեղեկատվական տեխնոլոգիաների այն տեսակների մասին, որոնք ամենահաճախն են օգագործվում հատկապես կրթական համակարգում.դրանք են՝ Google (որոնողական համակարգ), Վիքիպեդիա (ազատ հանրագիտարան, որն գրվում է համատեղ այն օգտագործող մարդկանց կողմից: Հատուկ տիպի վեբ-կայք է, որ ստեղծված է համատեղ աշխատանքը հեշտացնելու նպատակով), Youtube (տեսանախագծային կայք, որի օգտատերերը և այցելուները կարող են որոշակի ինֆորմացիա ստանալ տեսանյութերի տեսքով), Microsoft Office Power point (ծրագիր, որը հնարավորություն է տալիս ցուցադրումներն ավելի գեղեցիկ դարձնել, որի մեջ կարող ենք ավելացնել նաև ձայնային և տեսաէֆեկտներ), նաև Quizizz, Goggle Forms և այլն:

Հաջորդ գլխում արդեն կներկայացնեմ դասապրոցեսի ընթացում օգտագործված տեղեկատվական տեխնոլոգիաներից մի քանիսը, որոնք ավելի արդյունավետ և հետաքրքիր են դարձրել դասը:

[4] Ս.Գյուլումյան, Գալանտերյան,Պողոսյան,2016, “Տեղեկատվական համակարգեր և տեխնոլոգաներ”

Տեղեկատվական տեխնոլոգիաների օգտագործումը կրթական ոլորտում

Հայ ժողովուրդն աշխարհի հնագույն ժողովուրդներից է: Նա անցել է բարդ ու դժվարին , բայց հերոսական ու փառահեռ զարգացման ճանապարհ: Կերտել է հարուստ պատմություն ու մշակութ՝ լի կորուստներով ու ձեռքբերումներով, հաղթանակներով ու պարտություններով: Այսպես է ձևավորվել հայ ժողովրդի պատմությունը , որը պետք է իմանա յուրաքանչյուր հայ՝ անկախ տարիքից ու ապրելու վայրից: Առանց հայոց պատմության իմացության անհնար է կոչվել ազգի լիիրավ անդամ, և իհարկե այն հնարավորություն է տալիս հասնել մեր ազգային ցանկությունների իրականացմանը, պահել ու պահպանել մեր ազգային կերպարը: Այս գործում մեծ է ուսուցչի դերը: Արդի ժամանակներում նա պետք է վերանայի իր աշխարհայացքային մոտեցումները և որդեգրի ժամանակաշրջանին և սերունդների հետաքրքրությունից բխող մտածելակերպ ու գործելակերպ: Պետք է քայլել ժամանակներին ու տեխնիկայի զարգացումներին համընթաց և փորձել տեղեկատվական տեխնոլոգիաները դարձնել դասապրոցեսի մի մասնիկը: Ըստ իս SS-ն դասը դարձնում է ավելի հետաքրքիր, գունեղ ու հասանելի աշակերտին: Դրա ճիշտ և գրագետ օգտագործման դեպքում կարելի է հասնել անգամ “ամենածույլ” աշակերտի հետաքրքրասիության առաջացմանը: Հետազոտական աշխատանքի այս բաժնում կներկայացնեմ այն դասապրոցեսները, որոնցում քիչ թե շատ օգտագործվել են արդի տեղեկատվական տեխնոլոգիաները:

ՓՈՐՁԱՐԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ

Փորձարարական դաս 1

Ես իմ հետազոտական աշխատանքը անցկացրել եմ ՀՀ Գեղարքունիքի մարզի Սոթքի միջնակարգ դպրոցի 9-րդ դասարանում,որտեղ սովորում է 15 աշակերտ՝ 9տղա ,6 աղջիկ,որոնք ունեն տարբեր կարողություններ,հմտություններ և հետաքրքրություններ,հ.պատմություն առարկան այս դասարանում անցնում են շաբաթական 3ժամ և այս դասարանում ես դասավանդում եմ 4 տարի:Քանի որ այս դասարանի աշակերտների որոշ մասը հետաքրքրված չէ հայոց պատմություն առարկայով,այդ իսկ պատճառով որոշեցի այս դասարանում դասը վարել տեսասահիկների և տեսաֆիլմի միջոցով:Այսօրվա մեր դասի թեման էր / Հայկական հարցը Փարիզի վեհաժողովում , Սևրի պայմանագիրը/: Դասի նպատակն էր.աշակերտն իմանա Փարիզի խորհրդաժողովի հրավիրման ժամանակը, Հայկական հարցը ներկայացնող պատվիրակությունները, Սևրի պայմանագրի 88-93-րդ հոդվածների բովանդակությունը և իհարկե այդ պայմանգրի պատմական նշանակությունը: Նախապես աշակերտներին հանձնարարվել էր օգտվելով սկզբնաղբյուրներից բերել լրացուցիչ տեղեկություն դասի վերաբերյալ: Դասարանը բաժանվել էր խմբերի. առաջին խումբը պատրաստել էր տեսասահիկ, որտեղ նկարների և փոքրիկ տեսանյութերի միջոցով ստացել էին հետաքրքիր “ֆիլմ” Սևրի պայմանգրի կնքման , կարևորության, պատմական նշանակության վերաբերյալ: Տեսասահիկը պատրաստելու համար աշակերտներն օգտվել էին Microsoft Office Power point ծրագրից: Աշակերտների մյուս խումբը պատրաստել էր գծապատկեր, որում ներկայացված էին Փարիզի խորհրդաժողովում ներկայացած երկու հայկական պատվիրակությունների առաջադրած պահանջների կարևորությունը, նմանություններն ու տարբերությունները: Դասարանի հետ միասինմենք հասանք մեր առջև դրված խնդրի լուծմանը՝ չունենալով գերժամանակակից համակարգչային դասասենյակներ, բայց տիրապետելով նորագույն տեղեկատվական տեխնոլոգիաների նրբություններին և հմտություններին, կիրառելով այդ գիտելիքները դասապրոցեսի ընթացքում ստացանք հագեցած, հետաքրքիր և ժամանակակից դաս: Աշակերտները մեծ բավականություն ստացան դասից, քանզի սովորեցին և կիրառեցին նաև տեղեկատվական տեխնոլոգիաների մի քանի տեսակներ:

Դասերին պատրաստվելիս, հատկապես ցածր դասարաններում, ես նաև օգտվում եմ ինտերնետային ռեսուրսներից՝ օգտագործելով ամենատարբեր տեսողական, երաժշտական և վիդեո նյութեր, քանզի գաղտնիք չէ, որ ավելի ցածր դասարանի աշակերտների հետաքրքրությունը շարժելու և բավարարելու համար անհրաժեշտ է օգտագործել “մանկավարժական զինանոցի բոլոր հնարքները”: Պատմություն առարկան նոր ուսումնասիրող աշակերտները ցանկանում են տեսնել և լսել, իմանալ և ուսումնասիրել ավելի շատ նյութ, քան գրքում է: Ներկայացնեմ տեղեկատվական տեխնոլոգիայով հագեցած այդպիսի մի դաս.

Փորձարարական դաս 2

Ես իմ հետազոտական աշխատանքը անցկացրել եմ ՀՀ Գեղարքունիքի մարզի Սոթքի միջնակարգ դպրոցի 8-րդ դասարանում,որտեղ սովորում է 6 աշակերտ՝ 4տղա 2 աղջիկ,որոնք ունեն տարբեր կարողություններ,հմտություններ և հետաքրքրություններ,հայոց պատմություն առարկան այս դասարանում անցնում են շաբաթական 3ժամ և այս դասարանում ես դասավանդում եմ 4 տարի: :Այսօրվա մեր դասի թեման էր /հայկական գաղթավայրերը/: Դասի նպատակն էր.աշակերտը պետք է իմանա,թե որոնք են հայկական գաղթավայրերի առաջացման պատճառները,ինչ է գաղութը,թվարկի հայկական հիմնական գաղթավայրերը:

Աշակերտը պետք է կարողանա սեփական տեսակետն արտահայտել արտագաղթի, ներգաղթի և հետգաղթի մասին:

Քարտեզի վրա ցույց տա այն երկրներն,որտեղ ձևավորվելեն հայկական գաղթօջախներ:

Ներկայացնի գաղթավայրերի դերը հայապահպանության գործում:

Դասարանի հետ համատեղ մենք ձևավորեցինք այն միտքը,որ գաղութը կամ գաղթօջախը մարդկանց դարձնում է համախմբված:Գաղթողներն օտար երկրում սովորաբար պահպանում են մայրենի լեզուն,հայրենի դավանանքը,ազգային ավանդույթներն ու դիմագիծը:

Փորձարարական դաս 3

Ես իմ հետազոտական աշխատանքը անցկացրել եմ ՀՀ Գեղարքունիքի մարզի Սոթքի միջնակարգ դպրոցի 12-րդ դասարանում,որտեղ սովորում է 6 աշակերտ՝ 2տղա ,4 աղջիկ,որոնք ունեն տարբեր կարողություններ,հմտություններ և հետաքրքրություններ,հայոց պատմություն առարկան այս դասարանում անցնում են շաբաթական 5ժամ և այս դասարանում ես դասավանդում եմ 2 տարի:Քանի որ այս դասարանի աշակերտների որոշ մասը հետաքրքրված չէ հայոց պատմություն առարկայով,այդ իսկ պատճառով որոշեցի այս դասարանում դասը վարել տեսասահիկների և տեսաֆիլմի միջոցովԱրցախյան շարժում:Դասի նպատակն էր ՝ աշակերտն իմանա Արցախյան շարժման սկիզբն ու ընթացքը, լուսաբանի “Կոլցո” գործողությունը և դրա հետևանքները,նկարագրի Գետաշենի և մյուս գյուղերի հայության հերոսական ինքնապաշտպանությունը: Դասը սկսվեց լռության մեկ րոպեով՝ հարգանքի տուրք մատուցելով Արցախյան պատերազմների հերոսների հիշատակին: Դասը հարուստ էր լրացուցիչ նյութերով, պատմական սկզբնաղբյուրներով և,իհարկե, տեղեկատվական տեխնոլոգիայով: Ֆրոնտալ հարցադրումներից, քննարկումներից և վերլուծություններից հետո աշակերտներին ցուցադրվեց Արցախյան առաջին պատերազմի իրական դրվագները, ազատամարտիկների անձնուրաց և հերոսական պայքարը: Աշակերտներն իրենց հերթին պատրաստել էին սահիկաշար,որտեղ ներկայացված էր Արցախյան երկու պատերազմների հերոսների նկարները, վերնագրված էր “ ~~Բարձունքը մերն է~~, տղերքը չկան”…

Դասը հասավ իր նպատակին: Աշակերտները դասը եզրափակեցին հետևյալ խոսքերով.” Քանի կա հայի պայքարող ոգին՝ մենք կանք, կլինենք ու կշատանանք”:

Հետազոտական աշխատանքի հաջորդ գլխում կուսումնասիրենք տեղեկատվական տեխնոլոգիաների դրական և բացասական ազդեցությունը և կործանարար կախվածությունը:

Եզրակացություն

8,9,12-րդ դասարաններում դասերն անցկացվեց տարբեր թեմաներով և տարբեր ձևերով,ուսուցման տարբեր մեթոդներով: 8-րդ դասարան՝ Հայկական գաղթավայրեր,9-րդ դասարան՝ Հայկական հարցը Փարիզի վեհաժողովում,Սևրի պայմանագիր և 12-րդ դասարան՝ Արցախյան շարժում :Միտքը նույն էր հայի պայքարող, տանջված տեսակն էր՝ պատերազմներից հետո գաղթական դարձած և իրենց հարցը մեծ տերություններում ներկայացրած լինելը:Աշակերտների մոտ ոչինչ զարմանք չառաջացրեց,որովհետև նրանք իրենց աչքերով արդեն տեսել են այդ ամենը և շարունակում են տեսնել:9 և 12-րդ դասարաներում աշակերտների հետ օգտվել էինք ՏՀՏ գործիքներից,աշակերտները պատրաստել էին սահիկաշար, որը ավելի հեշտ և ըմբռնելի էր դարձնում նյութն ընկալելը: Դրա ճիշտ և գրագետ օգտագործման դեպքում կարելի է հասնել անգամ “ամենածույլ” աշակերտի հետաքրքրասիության առաջացմանը :8-րդ դասարանում չէինք կիրառել ժամանակակից ՏՀՏ գործիքներ,բայց զուգահեռ անցկացնելով այդ դասերի մեջ կարող եմ ասել, որ շատ բան չփոխվեց մեր դասի ընթացքից, քանի որ թեման այնքան հոգեհարազատ էր բոլորիս, այնքան արդի, որ մատուցման ձևին ուշադրություն կարելի էր չդարձնել:Աշակերտների հոգում և մտքում այնպես լավ է սերտված այս դասերը:Չէ որ տեսնում եմ նրանց դեմքի հուզմունքն ու թախիծը, երբ անդրադառնում եմ արցախյան պատերազմի զոհերին, որոնց թվում նրանց հարազատներն են, եղբայրները,նույն դպրոցն ավարտած շատ-շատ շրջանավարտներ:

Հետազոտական աշխատանքն ընտրված չէր պատահականության սկզբունքով: 21-րդ դարը գիտատեխնիկական հեղաշրջման և տեղեկատվական տեխնոլոգիաների սրընթաց զարգացման դարաշրջան է: Այսօր երեխաներին հասանելի է ամեն ինչ, և թերևս պատճառը դա է, որ նրանք մեծանում են ծնողից “անկախ”, խզվում է ծնող-երեխա,աշակերտ-ուսուցիչ բնական կապը: Դա կարող է հանգեցնել ֆիզիկական և հոգեկանլուրջ խնդիրների, իհարկե հանգեցնել կրթական մակարդակի նվազեցմանը: Դրա համարչափազանց կարևոր է այդ խնդրի լուծմամբ զբաղվել այսօր՝ հանուն երեխայի ապագայի, այն երեխայի, որը վաղը կերտելու է մեր երկրի ապագան: Առօրյայում և դասին կարևորել տեղեկատվական տեխնոլոգիաների օգտագործումը, բայց չափավոր՝ առանց վնասելու կրթությունն ու երեխային:

> Կցանկանամ ավարտել մի դպրոցի տնօրենի հետևյալ խոսքերով, որը նա ուղղում էր ուսուցիչներին. “ Ես խնդրում եմ ձեզ.օգնեք երեխաներին մարդ դառնալ: Ձեր կրթած սերունդը չպետք է լինի կրթված հրեշ, անգիր արած հոգեկան հիվանդներ, կրթված մարդասպաններ: Խնդրում եմ, օգնեք մեր երեխաներին ավելի մարդկային լինեն”:

Օգտագործված գրականության ցանկ

1. Սերոբ Խաչատրյան . “ Ուսուցման արդյունավետ հնարներ”
2. Ս.Գյուլումյան, Ա.Գալանտերյան,Մ.Պողոսյան. “Տեղեկատվական համակարգեր և տեխնոլոգիաներ”
3. Ս.Է.Կոսեմյան, Ա.Սմբատյան. “Ինֆորմատիկա և ՏՏ-ի հիմունքներ”
4. Լուսինե Կարապետյան . “Ինտերնետային կախվածության հիմնախնդիրների շուրջ” :
5. Ա. Ղուկասյան, Հայոց պատմություն, Ուսուցչի ձեռնարկ 8-9.

էլեկտրոնային պաշար

http://www.noravank.am/arm/articles/detail.php?ELEMENT_ID=16122

https://hetq.am/hy/art

Հավելված

ԴԱՍԱՊԼԱՆ 1

Ուսուցիչ՝ Հերմինե Մելքոնյան

Առարկան՝	Հայոց պատմություն	Ամսաթիվ 12.10.2021թ	Կիսամյակ 1-ին	Դասարան 9-րդ
Խմբի բացվածք	Աղջիկ: 8 Տղա: 4 OS ՈՒՀԿ:			
Թեմա	Հայկական հարցը Փարիզի վեհաժողովում:Սևրի պայմանագիրը:			
Օգտագործվող նյութեր	Դասագիրք, քարտեզ,տիտ			
Ամբողջական պատկեր	Սովորողը տեղեկություններ ստանա 88-93-րդ հոդվածների բովանդակության և իհարկե այդ պայմանգրի պատմական նշանակության մասին:			
Դասի նպատակ	Աշակերտն իմանա Փարիզի խորհրդաժողովի հրավիրման ժամանակը, Հայկական հարցը ներկայացնող պատվիրակությունները:			
Վերջնարդյունքներ	Աշակերտը կկարողանա. .Գնահատել Սևրի պայմանագրի պատմական նշանակությունը . Ներկայացնել Փարիզի խորհրդաժողովում ներկայացած երկու հայկական պատվիրակությունների առաջադրած պահանջների կարևորությունը, նմանություններն ու տարբերությունները:			
Գործողություններ /ժամ/տևողություն/	Ուսումնական գործունեություն Աշակերտներ	Պլանավորած տարբերակում և ՈՒԳ ռազմավարություններ	Առանցքային հարցեր Հիմնական ստուգումներ /հանձնարարության վերջնարդյունքը նպաստումէ դասի նպատակին/	

Մուտք,ներկա-բացակա /3ր/ Դասի Սկիզբ /5-7ր/	Նախապես աշակերտներին հանձնարարվել էր օգտվելով սկզբնաղբյուրներից բերել լրացուցիչ տեղեկություն դասի վերաբերյալ:Արդեն հավաքագրված ինֆորմացիան աշակերտները ներկայացնում են դասարանին և պատմում,թե ինչ սկզբնաղբյուրներից են օգտվել:	Խթանում, հետաքրքրությունների ստեղծում, ծանոթացում դասանյութին, խնդիրներին	
Ընթացք /25-30ր/	Դասարանը բաժանվել էր խմբերի. առաջին խումբը պատրաստել էր տեսասահիկ, որտեղ նկարների և փոքրիկ տեսանյութերի միջոցով ստացել էին հետաքրքիր “ֆիլմ” Սևրի պայմանգրի կնքման , կարևորության, պատմական նշանակության վերաբերյալ: Տեսասահիկը պատրաստելու համար աշակերտներն օգտվել էին Microsoft Office Power point ծրագրից: Աշակերտների մյուս խումբը պատրաստել էր գծապատկեր, որում ներկայացված էին Փարիզի խորհրդաժողովում ներկայացած երկու հայկական պատվիրակությունների առաջադրած պահանջների կարևորությունը, նմանություններն ու տարբերությունները: Դասարանի հետ միասին մենք հասանք մեր առջև դրված խնդրի լուծմանը՝ չունենալով գերժամանակակից համակարգչային դասասենյակներ, բայց տիրապետելով նորագույն	Բացատրում է աշակերտների մոտ առաջացած հարցերը,հետևում խմբերի քննարկումներին,ամփոփում հիմնական մտքերը:	Երբ հրավիրվեց Փարիզի վեհաժողովը? Ինչ հարցեր ներկայացրեցին հայկական երկու պատվիրակությունները? Ինչ էր Սևրի պայմանագրի 88,93 հոդվածների բովանդակությունն?

Ավարտ/5ր/	տեղեկատվական տեխնոլոգիաների նրբություններին և հմտություններին, կիրառելով այդ գիտելիքները դասապրոցեսի ընթացքում աշակերտները ստացան հագեցած, հետաքրքիր և ժամանակակից դաս: Խմբերը ներկայացնում են իրենց աշխատանքը : Թերթիկների վրա գրում են՝ ինչ սովորեցին,ինչթերընմբռնում ունեն, և հանձնում են:	Ներկայացնում է դասի նպատակներ ի,վերջնարդյունքների իր տարբերակը:	Չափանիշներ՝ • Փարիզի վեհաժողովի կարևորությունը • Սևրի պայմանագրի պատմական նշանակությունը

ԴԱՍԱՊԼԱՆ 2

Ուսուցիչ՝ Հերմինե Մելքոնյան

Առարկան՝	Հայոց պատմություն	Ամսաթիվ 12.10.2021թ	կիսամյակ	1-ին	Դասարան	8-րդ
Խմբի բացվածք	Աղջիկ: 6 Տղա 7 OS ՈՒՀԿ:					
Թեմա	Հայկական Գաղթավայրեր					
Օգտագործվող նյութեր	Քարտեզ, համակարգիչ:					
Օգտագործվող նյութեր	Դասագիրք, քարտեզ,տիտ					
Ամբողջական պատկեր	Աշակերտները մանրամասն ուսումնասիրել էին Արևելքի և Արևմուտքի գաղթավայրերի մասին տեղեկությունները:					
Դասի նպատակ	.Իմանա՝որոնք են հայկական գաղթավայրերի առաջացման պատճառները: .Ինչ է գաղութը: .Թվարկել հայկական հիմնական գաղթավայրերը:					
Վերջնարդյունքներ	. Աշակերտը կկարողանա՝ . Սեփական տեսակետն արտահայտել արտագաղթի, ներգաղթի և հետգաղթի մասին: .Քարտեզի վրա ցույց տա այն երկրներն,որտեղ ձևավորվելեն հայկական գաղթօջախներ: . Ներկայացնի գաղթավայրերի դերը հայապահպանության գործում:					

Գործողություններ /ժամ/տևողություն/	Ուսումնական գործունեություն Աշակերտներ	Պլանավորած տարբերակում և ՈՒԳ ռազմավարություններ Ուսուցիչ	Առանցքային հարցեր Հիմնական ստուգումներ /հանձնարարության վերջնարդյունքը նպաստումէ դասի նպատակին/

Մուտք,ներկա-բացակա /3ր/			
Սկիզբ /5-7ր/	Աշակերտները լսում են, գրում են հարցերը, մտածում են տրված հարցերի մասին, վերհիշում են անցածը,պատասխանում են հարցերին;	Մտագրոհի միջոցով փորձում է հիշեցնել նախորդ ասերի անցածը	
Ընթացք /25-30ր/	Պատմում են հանձնարարված նյութը,ներկայացնում են հայակական հիմնական Գաղթավայրերը,դրանց առաջացման պատճառները,և Ներկայացնում են,թե,որ երկներում են հիմնականում հաստատվում հայերը:	Բացատրում է, թե ինչ է գաղթավայրը, ինչու է առաջացել դրա ստեղծման անհրաժեշտությունը: դժվարացող աշակերտներին հարցերի միջոցով ներգրավվում է դասապրոցեսին,պատասխանում է առաջ քաշված հարցերին,ամփոփում հիմնական մտքերը:	Ինչ գաղութը: Որ երկրներում էին հաստատվում հայերը միջնադարում և նոր ժամանակներում Որոնք էին հայկական գաղթավայրերի առաջացման պատճառները:
Ավարտ /5ր/	Աշակերտները ներկայացրեցին սեփական տեսակետներն արտագաղթի,ներգաղթի և հետգաղթի մասին:	Լսում է աշակերտների տեսակետները: Ներկայացնում է դասի նպատակների և վերջնարդյունքների իր տարբերակը:	

Հավելված

ԴԱՍԱՊԼԱՆ 3

Ուսուցիչ՝ Հերմինե Մելքոնյան

Առարկան՝	Հայոց պատմություն	Ամսաթիվ 05.04.2022թ	Կիսամյակ 1-ին	Դասարան 12-րդ
Խմբի բացվածք	Աղջիկ: 8 Տղա: 4 OS ՈՒՀԿ:			
Թեմա	Արցախյան շարժում			
Օգտագործվող նյութեր	Դասագիրք, քարտեզ,տիտ			
Ամբողջական պատկեր	Սովորողը տեղեկություններ ստանա արցախյան շարժման վերաբերյալ			
Դասի նպատակ	Աշակերտն իմանա Արցախյան շարժման սկիզբն ու ընթացքը, լուսաբանի “Կոլցո” գործողությունը և դրա հետևանքները,նկարագրի Գետաշենի և մյուս գյուղերի հայության հերոսական ինքնապաշտպանությունը			
Վերջնարդյունքներ	Աշակերտը կկարողանա. .Ներկայացնել Արցախյան պատերազմը .Հայ բնակչության ջարդերն ու տեղահանություններն/Սումգայիթի,Գանձակի,Բաքվի/: . Գնահատել հայ հերոսների սխրանքները:			
Գործողություններ /ժամ/տևողություն/	Ուսումնական գործունեություն Աշակերտներ	Պլանավորած տարբերակում և ՈՒԳ ռազմավարություններ	Առանցքային հարցեր Հիմնական ստուգումներ /հանձնարարության վերջնարդյունքը նպաստումէ դասի նպատակին/	

Մուտք,ներկա-բացակա /3ր/ Դասի Սկիզբ /5-7ր/ Ընթացք /25-30ր/	Աշակերտները իրենց մոտ գրի է առնում տրված հարցերը, մտածում են, հիշում են և պատասխանում Զուգահեռ անցկացնելով ներկա ժամանակների իրադարձությունների հետ Դասը սկսվեց լռության մեկ րոպեով՝ հարգանքի տուրք մատուցելով Արցախյան պատերազմների հերոսների հիշատակին: Դասը հարուստ էր լրացուցիչ նյութերով, պատմական սկզբնաղբյուրներով և,իհարկե, տեղեկատվական տեխնոլոգիայով: Ֆրոնտալ հարցադրումներից, քննարկումներից և վերլուծություններից հետո աշակերտներին ցուցադրվեց Արցախյան առաջին պատերազմի իրական դրվագները, ազատամարտիկների անձնուրաց և հերոսական պայքարը: Աշակերտներն իրենց հերթին պատրաստել էին սահիկաշար,որտեղ ներկայացված էր Արցախյան երկու պատերազմների հերոսների նկարները, վերնագրված էր “ ~~Բարձունքը մերն է~~, տղերքը չկան”… հագեցած, հետաքրքիր և ժամանակակից դաս:	Մտագրոհ է անում,տալիս է հարցեր,լսում է կարծիքներ: Բացատրում է աշակերտների մոտ առաջացած հարցերը,հետևումքննարկումներին,ամփոփում հիմնական մտքերը: Ուսուցիչը դասը եզրափակեց հետևյալ խոսքերով.” Քանի կա հայի պայքարող ոգին՝ մենք կանք, կլինենք ու կշատանանք”:	Երբ է տեղի ունեցել արցախյան 1-ին պատերազմը? Որքան է այն տևել? Երբ է տեղի ունեցել արցախյան 2-րդ պատերազմը? Անցկացնել զուգահեռներ այդ երկու պատերազմների միջև՝ մեջբերելով ապրիլյան քառորյա պատերազմը:

Ավարտ/5ր/		Ներկայացնում է դասի նպատակները,թերըմբռնումները հաջորդ դասին՝ անդրադառնալու:	Չափանիշներ՝ 5հիմնական փուլեր 1988-1990 1991-1992 1992-1993 1993փետրվարի5-նոյեմբերի 1 1993-1994